ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N: 6

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականների և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Երևան	5 սեպտեմբերի 2019 թ. ժամը՝ 10:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ /Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավարի ժ/պ)
Անդամներ՝	**Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ) **Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ) **Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

Ընդունել ի գիտություն՝

30.08.2019թ հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՏՈՒՐԲԵԿՍ» ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Հրավերով սահմանված ժամկետում ստացվել է հարցման վերաբերյալ եզրակացությունը:

30.08.2019թ մասնակցին ներկայացվել է ծանուցում՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ Հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացնելու վերաբերյալ:

Հրավերով սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց հետևյալը

1. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

2. Մասնակիցը՝

- հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 1000 (մեկ հազար) դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ, որը չի գերազանցում օրենսդրությամբ սահմանված շեմը,
- հայտը ներկայացնելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից,
- հաշվետու տարվա ընթացքում պարտավորություններ չունի:

Մասնակցի որակավորում «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

Առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրի մասով հայտնաբերվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. «Ապրանքային նշան» սյունակում նշված է երկարտակենտրոնակային փական՝ հրավերով պահանջվող եռարտակենտրոնակային փականի փոխարեն:
2. Փականի իրանի նյութը ներկայացվել է ճկուն թուջ՝ հրավերով պահանջվող պողպատի փոխարեն:

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով.

1. Պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրերի փաստաթղթերում ներառված չեն համապատասխան հաշիվ-ֆակտուրաները:

Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և մասնակցին ծանուցել հայտնաբերված անհամապատասխանությունների շտկման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել Մասնակցի կողմից ճշգրտված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ն. Համբարձումյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ա. Ջալադյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան